«ՍՈՅՈՒԶԶԱԳՈՏԿՈԺ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ԿԱՇՎԵՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆՐԱՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

38
Հ-25

C.

1935

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

Պատ. խմբ. Ս. Խաչատրյան
Տեխ. խմբ. Գ. Սարայան
Սրբագրիչ Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր № 819

Հրատ. № 160, պատվ. № 759, տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 30 դեկ. 1934 թ.
Ստորագրված է տպագրության 14 հունվարի 1935 թ.

Պետհրատի տպարան Երևան

# ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ԿԱՇՎԵՀՈՒՄՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. հոկտեմբերի 23-ի վորոշման հիման վրա Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ է.***

1. *Սահմանել, վոր խորհրդային տնտեսությունները պետական ու կոոպերատիվ*

09 SEP 2013

54.882

կազմակերպությունների օժանդակ տնտեսությունները, հանրային սննդի կազմակերպությունները, զինվորական մասերը և կոլտնտեսությունները (հանրայնացված անասունների նկատմամբ) պարտավոր են մորթվող և սատկող խոշոր ու մանր եղջերավոր անասունների, ձիերի, ուղտերի, խոզերի բոլոր մորթիները սահմանված պետական գներով հանձնել հիմնական մթերողներ— Սոյուզզագոտկոժին և Սպառկոոպերացիային այն շրջաններում, որոնք հատկացված են նրանց կաշվեհումքի կենտրոնացված մթերում կատարելու համար:

2. Կաշվեհումքը պետք է հանձնել կաշին քերթելուց հետո՝ 10 օրից վոչ ուշ:

3. Պարտավորեցնել Սոյուզզագոտկոժին և Սպառկոոպերացիային այս վորոշման 1 հոդ. մատնանշված կաշվեհումքհանձնողներին պետական հաստատուն գներով կաշվեղեն ապրանքներ ու փոխանման վաճառել հետևյալ չափերով՝

ա) Խորհտնտեսություններին և պետական ու կոոպերատիվ մյուս կազմակերպություններին՝ հանձնված հումքի արժեքի 20 տոկոսի չափով:

բ) Կոլտնտեսություններին՝ հանձնված հումքի արժեքի 60 տոկոսի չափով:

գ) Կոլտնտեսությունների հանձնած հումքի արժեքի մնացած գումարի դիմաց մթերողները նրանց արդյունաբերական և պարենային այլ ապրանքներ են բաց թողնում (վաճառում):

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահի տեղակալ Ա. ԵՐԶՆԿՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
գործերի կառավարիչ Ա. ՔՈՉՄԱՋՅԱՆ

# ՎՈՐՈՇՈՒՄ № 101

## ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ

1934 թվի Դեկտեմբերի 11-ին

Ի հետևումն ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեյի 10/11-34 թ. № 4210 վորոշման, ՀՍԽՀ Ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

1. Սահմանել, վոր խորհրդային տնտեսությունները, պետական ու կոոպերատիվ կազմակերպությունների ոժանդակ տնտեսությունները, հանրային սննդի կազմակերպությունները, զինվորական մասերը և



կոլտնտեսությունները (հանրայնացված անասունների նկատմամբ) պարտավոր են մթերվող և սատկող խոշոր ու մանր յեղջյուրավոր անասունների, ձիերի, ուղտերի ու խոզերի բոլոր մորթիները սահմանված պետական գներով հանձնել հիմնական մթերող կազմակերպություններին՝ Սոյուզզագոտկոժին և սպառկոոպերացիային։

2. Պարտավորեցնել Սոյուզզագոտկոժին և Հայկոոպի մթերման գրասենյակին՝ վոչ ուշ քան 1935 թ. հունվարի մեկը կնքել պայմանագրեր՝ խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և ոժանդակ տնտեսությունների հետ՝ կաշվեհումքը հանձնելու մասին, ցույց տալով հիշյալ պայմանագրերում կաշվեհումքի ընդունման ժամկետները և արժեքի վճարման պայմանները։

3. Սահմանել պայմանագրերի կնքման և կաշվեհումքի ընդունման հետևյալ կարգը.

ա) Սոյուզզագոտկոժը պայմանագրեր կնքում է բոլոր խորհտնտեսությունների և այն կոլտնտեսությունների ու ոժանդակ

տնտեսությունների հետ, վորոնք առանձնացված են վերջինիս կազմից սպասարկելու համար։

բ) Սպառկոոպերացիան պայմանագիրը կնքում է այն կոլտնտեսությունների ու ոժանդակ տնտեսությունների հետ, վորոնք առանձնացված են վերջինիս կազմից սպասարկելու համար։

գ) Կոլտնտեսությունների և ոժանդակ տնտեսությունների բաշխումը մթերող կազմակերպությունների միջև՝ կաշվեհումքը մթերելու համար կատարում է շրջանային գործադիր կոմիտեն։

դ) Խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում ու ոժանդակ տնտեսություններում, վորոնք գտնվում են գյուղական վայրերում, կաշվեհումքն ընդունվում է տեղում (տնտեսության մեջ) այն մթերող կազմակերպության կողմից, վորը կնքել է համապատասխան պայմանագիր տվյալ տնտեսության հետ։



յե) Բոլոր տնտեսությունները, հիմնարկները և կազմակերպությունները, վորոնք գտնվում են քաղաքներում, շրջանային կենտրոններում, սպանդանոցներից դուրս մորթված անասուններից ստացված ամբողջ կաշվի հումքը պարտավոր են անմիջապես հանձնել տեղի Սոյուզզագոտկոժի պունկտին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ շրջսպառկոոպի հումքային պահեստին։

զ). Պայմանագրերով ընդգրկված մանր, ոժանդակ տնտեսությունները, նմանապես հիմնարկները, կազմակերպությունները (սանատորիաներ, հիվանդանոցներ, ճաշարաններ և այլն), վորոնք գտնվում են գյուղական վայրերում, կաշվեհումքը հանձնում են Սպառկոոպերացիային։

է) Մինչև կաշվեհումքը մթերող կազմակերպությանը հանձնելը, տնտեսությունները պարտավոր են կոնսերվիրովկայի յենթարկել կաշվեհումքը և պահել այնպիսին

համապատասխան տեղ, վորի համար յուրաքանչյուր խորհտնտեսություն, կոլտնտեսություն և ոժանդակ տնտեսություն կաշվեհումքի պահպանման, հանձնման ու վորակի գործը դնում է իրենց կողմից առանձնացված հատուկ աշխատակցի վրա։

ը) Ոժանդակ տնտեսությունները, վորոնք գտնվում են արհեստակցական և հաշմանդամների կոոպերացիայի տրամադրության տակ, խոզի կաշվեհումքը հանձնում են այն արտելներին, վորոնք իրավունք ունեն մթերելու այդ հումքը՝ Աշխատանքի Պաշտպանության Խորհրդի մարտի 29-ի և ոգոստոսի 20-ի վորոշումներով սահմանված կարգով։

4. Առաջարկել Սոյուզզագոտկոժին՝

ա) Հրահանգել տնտեսությունների կողմից կաշվեհումքը հանելու ու պահպանման գործում առանձնացված ընկերներին.

բ) Պարգևատրել Նախընթաց կետում հիշված աշխատակիցներին, վորոնք կաշվեհումքի վորակը լավացնելու գործում աչքի կընկնեն։



գ) Ապահովել մինչև 1935թ. հունվարի մեկը բոլոր խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները, ոժանդակ տնտեսությունները ու բոլոր հիմնարկ-կազմակերպությունները, վորոնք հանձնում են պետությանը կաշվեհումք՝ այս առթիվ նախնական վերամշակման և պահպանման վերաբերյալ հրապարակված համապատասխան գրականությամբ ու ստանդարտով։

5. Պարտավորեցնել Սոյուզզագոտկոժին և սպառկոոպերացիային վճարելու կայուն պետական գներով կաշվեհումք հանձնող տնտեսություններին կաշվե ապրանք ու կոշկեղեն՝ անմիջապես կաշվեհումքն ընդունելուց հետո, ղեկավարվելով հետևյալ նորմաներով.

ա) Խորհտնտեսություններին և պետական ու կոոպերատիվ մյուս կազմակերպություններին հանձնված հումքի արժեքի 20 տոկոսի չափով, հետևյալ դիֆերենցիացիայով՝ յելնելով կաշվեհումքի վորակից.

Բոլոր տեսակի անասուններից ստացված կամ կաշվեհումքի համար (բացառությամբ մուշտակային—չուբնոյ ավչինա).

парные и мокросоленные 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակի համար 30 %-ի չափով.

за висушение 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակի համար 20 %-ի չափով։

չորրորդ տեսակի (բրակ)՝ բոլոր տեսակի կոնսերվիրովկայի համար 10 %-ի չափով։

Մուշտակացու 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակի հինգ հատ հում կաշվի դիմաց տալ մեկ հատ վերամշակված կաշի։

բ) Կոլտնտեսություններին հանձնված հումքի արժեքի 60 %-ի չափով, հետագա դիֆերենցիացիայով, յենելով հանձնվելիք կաշվեհումքի վորակից։ Բոլոր տեսակի անասուններից ստացված կաշվեհումքի համար (բացառությամբ մուշտակացու կաշվեհումքի)

за парные и мокросоленные 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակի համար 75 % չափով.



за висушеные 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակի համար 50 % չափով, 4-րդ տեսակի (բրակ)՝ բոլոր տեսակի կոնսերվիրովկայի համար 20 %-ի չափով։

Մուշտակացու՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեսակների 2 հատ հում կաշվի դիմաց տալ մեկ հատ վերամշակված։

Կոլտնտեսությունների հանձնված հումքի արժեքի մնացած գումարի դիմաց բաց թողնել (վաճառել) նրանց արդյունաբերական ու պարենային ապրանքներ։

գ) Մթերող կազմակերպության մոտ կաշվե ապրանք ու կոշկեղեն բացակայելու դեպքում, վորը կարող է բավարարել հանձնողի պահանջը, վերջինին թույլատրվում է այդպիսին ստանալ կաշվեհումքը հանձնելու օրից վոչ ուշ քան յերեք ամսվա ընթացքում մթերող կազմակերպության շրջանային պահեստից։

6. Պարտավորեցնել շրջմթերման լիազորներին պարտադիր կերպով ամեն մեկ

գամ մթերող կազմակերպությունների միջոցով ստուգել (խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները և օժանդակ տնտեսությունները) կաշվեհումքի փաստացի յելույթը և հանձնվածի քանակը։

Գ. Պարտավորել մթերող կազմակերպություններին՝ այս վորոշումը հասցնել բոլոր խորհտնտեսություններին, կոլտնտեսություններին և օժանդակ տնտեսություններին։

Ժողկոմխորհի մթերման կոմիտեի
Հայաստանի լիազոր՝ Ա. ՑԵՐՋՆԿՅԱՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա.Վ.



ՀՀ Ազգային գրադարան
NL0238209

10к

54. 882

Գին

О Заготовке кожевенного сырья

Сельхозгиз 1935 Ереван